

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը	0732.07.4 «Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկականապահովում» մասնագիտություն, 0732.07.02.4 «Օպերատոր՝ բուլդոզերի» որակավորում
I. Դերը	Բուլդոզերի օպերատորը, կազմակերպարավական տարբեր տնտեսաձևի ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման կազմակերպություններում կատարում է բուլդոզերի անվտանգ վարման, տեխնիկական շահագործման, տեխնիկական սպասարկման,անընդհատ տեխնիկական արատորոշման և ոչ բարդ անսարքությունների վերացման աշխատանքներ:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1. Բուլդոզերի անվտանգ կառավարման և շահագործման աշխատանքների կատարում</u>	
Աշխատանքային գործընթացը	Բուլդոզերի անվտանգ վարման նախապատրաստում, գրունտի մշակման տեխնոլոգիական աշխատանքների կատարում;
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստել բուլդոզերը անվտանգ վարման և շահագործման, 2) կարդալ տեխնոլոգիական գործընթացներին առնչվող սխեմաները և գծագրերը, 3) կատարել գրունտների մշակման տեխնոլոգիական գործընթացներով նախատեսված աշխատանքներ՝ ողջ ծավալով և որակով, 4) կատարել տեխնոլոգիական գործընթացների ավարտից հետո նախատեսված աշխատանքներ՝ համաձայն նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջների, 5) ձևակերպել հաշվետվություններ և հաշվառման վերաբերյալ փաստաթղթեր, 6) յօգտվել բուլդոզերի տեխնիկական շահագործման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերից, 7) օգտագործել տեխնիկական շահագործման համար անհրաժեշտ վառելիքաքսանյութեր, տեխնիկական հեղուկներ և շահագործական այլ նյութեր:
<u>Խնդիրների բնագավառ 2. Բուլդոզերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարում</u>	
Աշխատանքային գործընթացը	Բուլդոզերի առանձին ագրեգատների, համակարգերի և հանգույցների արատորոշում արտաքին նշաններով: Բուլդոզերի հերթափոխային տեխնիկական սպասարկման

	ծրագրով նախատեսված աշխատանքների կատարում; Բուլդոզերի սեզոնային տեխնիկական սպասարկման ծրագրով նախատեսված աշխատանքների կատարում;
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստել բուլդոզերը շահագործման, 2) ընտրել և օգտագործել տեխնիկական սպասարկման համար համապատասխան նյութեր, գործիքներ և սարքավորումներ, 3) կատարել նախատեսված տեխնիկական սպասարկման համապատասխան աշխատանքները՝ ողջ ծավալով և որակով, 4) ձևակերպել հաշվետվություններ և հաշվառման վերաբերյալ այլ փաստաթղթեր, 5) օգտվել բուլդոզերի տեխնիկական սպասարկման վերաբերյալ նորմատիվփաստաթղթերից, 6) օգտվել չափիչ գործիքներից և սարքերից, կատարել համապատասխան չափումներ;
Խնդիրների բնագավառ 3. Բուլդոզերի մշտական տեխնիկական արատորոշման և ոչ բարդ անսարքությունների վերացման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	Բուլդոզերի անընդհատ տեխնիկական արատորոշում, առանձին ագրեգատների, համակարգերի և հանգույցների ոչ բարդ անսարքությունների բացահայտում և վերացում, ընթացիկ նորոգման աշխատանքներին մասնակցում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստել բուլդոզերը ընթացիկ նորոգման, 2) կիրառել բուլդոզերի նախնական արատորոշման սարքեր և սարքավորումներ, 3) կատարել անընդհատ տեխնիկական արատորոշման աշխատանքներ, 4) բացահայտել հնարավոր ոչ բարդ անսարքությունները, 5) կատարել բուլդոզերի ոչ բարդ անսարքությունների վերացման աշխատանքներ՝ ողջ ծավալով և որակով, 6) ձևակերպել հաշվետվություններ և հաշվառման վերաբերյալ այլ փաստաթղթեր, 7) օգտվել բուլդոզերի ընթացիկ նորոգման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերից, 8) օգտագործել անսարքությունների վերացման ժամանակ անհրաժեշտ գործիքներ և սարքավորումներ, 9) օգտվել չափիչ գործիքներից և սարքերից, կատարել համապատասխան չափումներ;
Խնդիրների բնագավառ 4. Բուլդոզերի փորձարկման և զելման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	Բուլդոզերի առանձին ագրեգատների, համակարգերի և

	հանգույցների փորձարկման և զեւման նախատեսված աշխատանքների կատարում;
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բուլդոզերի նախապատրաստում փորձարկման, 2) նորոգված բուլդոզերի կամ դրա առանձին ագրեգատների ու հանգույցների փորձարկում՝ համաձայն նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջների, 3) բուլդոզերի նախապատրաստում զեւման, 4) նորոգված բուլդոզերի զեւում՝ համաձայն նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջների;
Խնդիրների բնագավառ 5. Փաստաթղթային աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1) տեխնիկական շահագործման աշխատանքների հետ կապված փաստաթղթերի ձևակերպում, 2) տեխնիկական սպասարկման աշխատանքների հետ կապված փաստաթղթերի ձևակերպում, 3) տեխնիկական զննման աշխատանքների հետ կապված փաստաթղթերի ձևակերպում, 4) անսարքությունների բացահայտման և վերացման աշխատանքների հետ կապված փաստաթղթերի ձևակերպում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ձևակերպել տեխնիկական շահագործման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը, 2) ձևակերպել տեխնիկական սպասարկման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը, 3) ձևակերպել տեխնիկական զննման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը, 4) ձևակերպել անսարքությունների բացահայտման և վերացման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Պատասխանատվություն է կրում բուլդոզերի անվտանգ վարման, տեխնիկական շահագործման և տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման համար:
IV. Լեզուները	Հայերեն՝ գերազանց, Ռուսերեն և անգլերեն՝ բավարար
V. Համակարգիչը	Տեքստային և աղյուսակային խմբագրիչներ՝ բավարար, համացանց՝ բավարար
VI. Գիտելիքները	
Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ	
Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> • գծագրություն, • նյութագիտության հիմունքներ,

	<ul style="list-style-type: none"> • թույլտվածքներ և նստեցվածքներ, չափիչ գործիքներ, • էլեկտրական սարքավորումներ, • վառելիքաքսանյութեր և տեխնիկական հեղուկներ, • կենսագործունեության անվտանգության պահանջներ, • աշխատանքի անվտանգություն և առաջին օգնություն:
<p>Կարողությունները և հմտությունները</p>	<ul style="list-style-type: none"> • գրունտների կարգը և հիմնական հատկությունների որոշում, • հողային աշխատանքների տեխնոլոգիական սխեմաների, բուլդոզերի տարբեր համակարգերի, հանգույցների ու մեքենամասերի գծագրերի և մասնագրերի ընթերցում, • բուլդոզերը շահագործման նախապատրաստում, • գրունտների մշակման տեխնոլոգիական աշխատանքների կատարում ողջ ծավալով և որակով, • հողային աշխատանքների կատարման որակի նախնական գնահատում, • բուլդոզերի զելում, փորձարկում և ստուգում, • բուլդոզերի անընդհատ տեխնիկական արատորոշում, • բուլդոզերի միջհերթափոխային և պարբերական տեխնիկական սպասարկում, • բուլդոզերի առանձին ագրեգատների, համակարգերի, մեխանիզմների և հանգույցների կարգաբերում, • բուլդոզերի առանձին ագրեգատների, մեխանիզմների և հանգույցների ոչ բարդ անսարքությունների բացահայտում և վերացում, • հաշվետվությունների և հաշվառման վերաբերյալ այլ փաստաթղթերի ձևակերպում, • բուլդոզերի տեխնիկական շահագործման, սպասարկման և ընթացիկ նորոգման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի օգտագործում, • տեխնոլոգիական գործընթացների իրականացման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների կիրառում, • անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում:
<p>VII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, նորը ընկալող, աշխատանքի նկատմամբ պատասխանատվության զգացում ունեցող:</p>
<p>Որակավորման մակարդակը</p>	<p>ՈՄ – 4</p>